

պրեւածներ, որ վերջի երկու դարուն մէջ ի Բագրեւանդ պատահած են:

Տեղեաց հեռաորութիւնը ստիպուած եմ ժամերով ցոյց տալ մի ժամը ի վերստի հաշուով:

Երկոյս Բ. Մասն ևս պատրաստ է. որը ևս ստուար հատոր մի պիտի կազմէ. որ պիտի պարունակէ Բագրեւանդայ հայ ժողովրդեան սովորութիւնները, մանկական սրախօսութիւններ, երգեր, ժողովրդական առածներ, ասածներ, առակներ, անկ-դոսներ, հանելուկներ, հեքիաթներ, Մանկական պատանեկան խումբ խումբ կազմուած խաղեր 20 ի չափ, նոյնպէս աղջկանց խաղեր, և ըն:

Աւշագրութիւն դարձուած է ժողովրդեան օրհներկներու և անէծքներուն. նա մանաւանդ ժողովրդեան հեթանոսական հաւատալեաց և աւանդութեանց վերայ, և ընդարձակ գրուած է Շուտ ու Դոյլաթի, Միջինք ու Տարւոյ վերայ:

Բագրեւանդայ Հայոց գութանը գոմշեղինաց պահպանութիւնը, գոմշի կուրը, ցանքը, ջրտուքը, խոտունձը, հունձքը, սայլը, կայլը, աղուն ու ընաղունը, ջրաղացը, որ նոյն իսկ Բագրեւանդայ ժողովրդեան բարբառով գրի առնուած է, լերեանց բազմաթիւ երգերով և ծանօթութիւններով:

Եթէ երկոյս առաջին մասն ընդունելութիւն դատու վաղընդ փոյթ կսկսիմ երկրորդ մասի հրատարակութեան:

